ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 456-Ա « 30 » մարտի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.129 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 5209-Ա որոշման N 2 հավելվածի 18-րդ կետը՝ 2026թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 12-ը ներառյալ «Երևանի հ.129 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2024-2025թթ. և 2026թ. հաշվետու ժամանակահատվածի համակարգի գնահատման աուդիտ:

2. «Երևանի հ.129 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս. Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետի ժ/պ Լ. Դանիելյանին և առաջատար մասնագետի ժ/պ Վ. Դանիելյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ